

յասէր հայրապետը, Գործք Առաքելոցի իր Խմբագիր մեկնութեան մէջ (էջ 153): Կափարգաղաման իր շրջանակներով հին և նոր տնտեսութեան ռահպիրաններուն ուխտասեղեաց կեդրոնն էր. յորմարագոյն վայրն էր՝ որ Կոմազիէէ ճշմարիտ իսրայէլացիի մը զգացումներով առլցուած Ս. Ստեփանոսի նշխարները ամփոփէր իր ազարակին մէջ, ուր յետոյ պիտի միանային իրեն ու գաւկին, ինչպէս նաև Նիկողիմոսի նշխարները: Այս գէպքէն 23 տարի յետոյ 438ին, Թէոդոս Բ. կայսեր թագուհին, ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Երկիրը, առաջնորդութեամբ Աղեքստղրիոյ Կիւրեղ հայրապետին: Եւզոկսիա թագուհին փափաքեցաւ Ս. Ստեփանոսի քարկոծման աւանդական տեղոյն վրայ քաղաքէն դուրս կառուցանել եկեղեցի մը և հոն զետեղել տալ անոր նշխարները: Կիւրեղ Աղեքսանդրացին, ինչպէս կը վկայէ ժամանակակից Կիւրեղ Սկիւթոպոլսեցին, տօնական հանդիսաւորութեամբ նախաձկային նշխարաց մէկ մասը Սիոնէն փոխադրեց թագուհին շինել տուած եկեղեցին, և զետեղեց ստորերկրեայ մատրան մը մէջ: Այս եկեղեցին, 614ին, պարսկական յարձակմանց ժամանակ կործանուեցաւ, Սաչակիրք վերաշինեցին զայն իր տեղոյն վրայ: 1187ին, երբ Սալահէտտին պաշարեց Երուսաղէմը, քաղաքին քրիստոնեայ բնակչութիւնը սաղմական պատճառներով ստիպուեցաւ քանգել նոյն եկեղեցին, որպէս զի թշնամին դիւրութիւն չունենայ նոյն կողմէն քաղաքը մտնելու: Այդ փլուզումէն ի վեր, նոյն մեծածախս եկեղեցին տւերակաց կոյտ մ'էր, և միայն կը յիշուէր իբր ուխտատեղի: 1882էն սկսեալ պեղումներ կատարուեցան հոն, և երեսն ելան Եւզոկսիայի եկեղեցւոյն գեղակերտ մոզայիքները և հիմերը, ինչպէս նաև զանազան վիմափոր գերեզմաններ: 8-10 տարիներու ընթացքին, Դոմինիկեանք հին եկեղեցւոյն հիման վրայ կառուցին նոր մը, և օժտեցին զայն Ս. Կրօց դպրոցով մը և ընդարձակ մատենադարանով:

Հին օրերէ սկսեալ հնախոյզք կ'ուզէին գիտնալ թէ ո՞ւր կը գտնուի Կափարգաղամա վաղեմի գիւղը, որ, ըստ Ղուկիանոսի նամակին, Երուսաղէմէն 20 մղոն հեռի էր: 1600ին, զիտնականն Քուրաէսմիոս Ս. Երկրի Փրանչիսկեանց մեծաւորը, ի զուր կը փնտռէր Ս. Ստեփանոսի տապանին հետքը, ծանօթ վայրին մէջ. Կափարգաղամա ռեւէ անունի մը հետ չէր կրնար նոյնա-